

ՍԻՐԱՄԱՐԳՆ ՈՒ ՍԿԱՀԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐԱՆՆԵՐՈՒՄ

ԺԱՆՊԻՆԻ ՄԱՀԵ (Ծրանխա)

Հայկական ավետարաններում հաճախ են հանդիպում նախազարդեր, որոնց կենտրոնում բաժակ կամ սկահ է նկարված՝ երկու կողմերում կանգնած սիրամարգներով: Սովորաբար այդ նախազարդերը զետեղված են խորանների կամ անվանաթերթերի (ավետարանառաջ) վերևում: Համոզվելու համար բավական է այդ հայտնի փաստից մի քանի օրինակ բերել: Մաշտոցի անվան Սատենադարանի Ա՝ 7736 ավետարանի¹ առաջին կանոնը պարունակող խորանի վերին մասում նկարված է վեց թռչուններով շրջապատված մի սկիհ: Խոշորներից երկուսը սիրամարգ են: Ա՝ 311 ավետարանի՝ Մարկոսի անվանաթերթերում, սիրամարգի և մի ուրիշ թռչունի մեջտեղում դրված է մի բառակ: Ա՝ 6305 ավետարանի² Ղուկասի անվանաթերթում նկարված է մի բաժակ երկու սիրամարգներով, Ա՝ 10750 ավետարանի³ Եվսեբիոսի նամակի վերևում՝ մի մեծ սկիհ, երկու սիրամարգներով և այլն:

Այդ նախազարդերի նշանակությունը հասկանալու համար պետք է հաշվի առնել զանազան ազդակներ. նախ՝ սիրամարգների և սկահի փոքր կերպարանքները հեշտ են տեղավորվում խորանի վերևի նեղ լուսանցքում: Երկրորդ՝ սիրամարգն այնքան գեղեցիկ թռչուն է, որ ըստինքյան առդեն զարդ է:

Դժվար չէ հայոց միջնադարյան մատենագրության մեջ գտնել սիրամարգի գեղեցկության խանդավառ դրվատանքներ⁴. «Զի՞նչ գեղեցկագույն քան ղսիրամարգ», — հարցնում է Եզնիկը, հիշատակելով պարսիկների այն կարծիքը, թե Արհիմն է սիրամարգին ստեղծել իր «գեղեցկագործությունը»՝ ապացուցելու համար: Փիլոնի ճառում կարդում ենք ավելի մանրամասն նկարաբանություն. «...Սիրամարգը, որք զպայծառ և զանազան թևավորութեանն զօրէն ոստայնից տեսանելով, և ամենագեղեցիկ տեսիլ ցուցանէ տեսողացն»⁵: Մովսէս Խորենացու «Պատմության» մեջ⁶, Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցում»⁷ ձեռնաստանը բնութագրվում է որպէս գեղեցիկ, քրքրավետ և սիրամարգաշատ երկիր: Հիրավի, շատ հավանական է, որ միջնադարյան ծաղկողները, կիսելով հին մատենագիրների հիացմունքը, սիրամարգներով ևն նախշել ավետարանների խորանները այդ թռչունների գեղեցկության պատճառով:

Սակայն թե՛ սիրամարգը և թե՛ դրա մոտ զետեղված սկահը կարող են նաև խորհրդավոր նշանակություն ունենալ: Այդ մասին է վկայում առաջին հեր-

¹ XI դար. գրիչ և ծաղկող՝ Հովհաննես Սանդղակաճանցի:

² Նկարված է XII դարի վերջում, ծաղկող՝ Գրիգոր Սկևռացի:

³ XIV դար, գրիչ՝ Գրիգոր Վայցցձորցի:

⁴ 1268 թ., գրիչ և ծաղկող՝ Թորոս Ռոսլին:

⁵ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. Վենետիկ, 1837, հ. Բ, էջ 715:

⁶ L. Mariès, C. Mercier. Eznik de Kolb, De Deo (Patrologia Orientalis 28/3). Paris, 1959.

⁷ Մ. Ա. Վ. Գ. Բ. Մ. Փիլոնի Եբրայեցոյ Բանք երեք... Վենետիկ, 1822, էջ 167:

⁸ Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1913, էջ 233:

⁹ G. R. Cardona. L'India e la Cina secondo l'Aṣṣarhaç'oyc'. — In: Armeniaca, Venise, 1969.

թին Արշարունյաց քորեպիսկոպոս Գրիգորիսը իր «Ընթերցուածոց մեկնութեան» մեջ, գրելով. «Զոր օրինակ զսիրամարգին թե որքան շրջադասն, այնքան երկին երկին գեղեցկութեանն զառաջին տեսեալն մոռացուցանէ, այնպէս եւ խորհուրդ Ընթերցուածոցն որքան յեղյեղուս րանիւ, այնքան պայծառացուցանէ յխորհուրդ փրկութեան մերոյ»¹⁰, Պարզ է, որ այս հատվածում սիրամարգի դույնգգույն փետուրները հասկացվում են ոչ թե որպես լույն յուրեղեն պատկեր, այլ որպես խորհրդանշիչ: Մշտափոփոխ և նորանոր երանգներով թռչունի փայլուն թևերը նմանվում են մարդու խոսքին անհաս աստվածային խորհուրդներին. ինչքան մեկնարանես փրկութեան խորհուրդը, շես կարողանա լրիվ խելամուտ լինել:

Սիրամարգը խորհրդավոր նշանակություն ունի նաև Գրիգոր Նարեկացու «Տաղ եկեղեցւոյ»-ի մեջ: Բերում եմ համապատասխան հատվածը՝ Վազգեն Գիվորգյանի հրաշալի թարգմանությամբ.

Եվ Դավթի որդին՝ Սողոմոն արքան,
Քերթողն այն վսեմ ու շքեղաշուք,
Հարդարեց այն պերճ, վայելուչ փառքով.
Խորանին խիտ-խիտ ականապաճույճ պսակներ կապեց,
Կանգնեցրեց այնտեղ և վիմարձաններ
Աղավանման յոթնաշիններով,
Շքեղարարո, զեղանաղաճեմ, սիգաքայլ թռչուն,
Սիրամարգ, որը ասում էր կարծես.
«Այն ո՞վ է պարզել վեհասքանչորեն պարանոցն իր օդ,—
Ես, որ եկել եմ ինձ արարողի,
Ինձ ուղարկողի կողմից և ա՛ն
Գնում եմ հեռո՛ւ, գնում եմ հեռո՛ւ,
Փայլելով պայծառ արփիանման ճաճանչումներով
Ու ծիրանածիր տեսքով վառվռուն»¹¹:

Մեզ զբաղեցնող ավետարանների խորաններում զետեղված սիրամարգների հարցի կապակցությամբ շատ հետաքրքրական է Նարեկացու սույն բնագիրը, որովհետև Սողոմոնի կողմից տաճարի խորանում որպես վիմարձան կանգնեցված սիգաքայլ թռչունը՝ սիրամարգը, հանկարծակի խոսքն ուղղում է հանդիսատեսներին՝ իրեն ներկայացնելով որպես արարողի՝ Աստծու պատվիրակ, հրավիրելով մարդկանց ոգիներին հեռո՛ւ, շատ հեռո՛ւ, այն լույս աշխարհը վերամբառնալու: Երկնային հրեշտակի նման, այդ սիրամարգը մարմնավորում է եկեղեցու ավետարանական քարոզությունը, ինչպես հանդիպում է նաև «Հարություն» մեղեդու մեջ.

Հավիկն, հավիկն արթնացած
Հեթանոսներ տեսնելով,
Ջայնեց, ձայնեց տատրակին՝
Սիրասունդ սիրելուն.
— Դարձի՛ր, դարձի՛ր սոմնացի՛դ,
Հովանու տակ այն ժայռի,
Ե՛կ, հարսնուհի՛դ լեռներից, ինձերի ու այծեամենների դաշտերից¹²:

¹⁰ Գրիգորիս Արշարունի. Մեկնութիւն Ընթերցուածոց. Վենետիկ, 1964, էջ 96:

¹¹ Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության, թարգմ. Վ. Գևորգյանի. Երևան, 1979, էջ 593—594: Հմմտ. Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր, աշխատ. Ա. Քյոշկերյանի. Երևան, 1981, էջ 126—127:

¹² Նույն տեղում, էջ 585: Հմմտ. Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր, էջ 115:

Սակայն բերենք խորանների մեկնություններում եղած տեսակետները, որոնց հեղինակներն են Ստեփանոս Սյունեցին և Ներսես Շնորհալին, քաղելով միայն սիրամարգներին վերաբերող տեղիները: Ստեփանոս Սյունեցին այսպես է մեկնաբանում սիրամարգի նշանակությունը. առաջին խորանի մասին ասում է. «Հաբն ի վերայ կամարացն՝ սիրամարգը զհին արինացն, զմարգարէական և զընտրողական արտաքոյ եկեղեցւոյ մարմնաւոր պաճուճիւր խաւսելով ի նոր եկեղեցիս»¹³: Այս բացատրությունը բավական նման է Նարեկացու տաղին, որում Սողոմոնի կանգնեցրած սիրամարգը հրավիրում է եկեղեցու ընտրյալներին՝ իրեն հետևելու դեպի աստվածային աշխարհը: Մատթեոսի ավետարանի մեկնաբանության մեջ Ներսես Շնորհալին բացատրում է, թե առաջին խորանն այն տեղն է նշանակում, եւր ինքն աստուածութիւնն ասի բազմալ ի լոյսն անմատչելի... զամենայն արարածս արտաքոյ թողեալ... բայց սակայն երեք դասքն՝ աթոռոց, սերովբէից և քերովբէից անընդմիջաբար վայելեն ըստ կարի իւրեանց. ի տեսլենէ փառաց նորա:

Իսկ երկրորդ խորանն և երրորդը՝ ...յայտնեն զմիջին և զվերջին քահանայութիւն անմարմնոցն, եւ են ի խորանս յայտոսիկ՝ ծառք արմանիք և հաւք սիրամարգք. ծառքն զբարձրութիւն նոցա ցուցանէ... և սիրամարգն ոսկեփետուր եւ ոսկետուներ զմաքուր և զձոյլ և զանարատ բնութիւն նոցա նշանակէ»¹⁴:

Ինչպես երևում է այս բացատրությունից, սիրամարգները պետք է գրտնշվեն միայն առաջին երեք խորաններում, երկնքի ամենաբարձր շրջանների խորհրդանշաններում, որպես մարմնացումներ հրեշտակների ամենավսեմ դասերի՝ աթոռների, սերովբեների և քերովբեների, միջին և վերջին երկնաբնակ քահանայությունների:

Հակառակ Ներսեսի ցուցմունքների (սիրամարգ պիտի նկարվեր առաջին երեք կամ միայն առաջին խորանում) Թորոս Ռոսլինի նկարած ավետարանների սիրամարգները¹⁵ գտնվում են միայն առաջին և երկրորդ խորաններում, եվ սերովբուի նամակի վերևում (իսկ Մատենադարանի № 3256 ձեռագրում սիրամարգ կա միայն առաջին խորանում¹⁶: Ներսեսի ցուցմունքները չեն հարգվում նաև Մատենադարանի № 2877 ձեռագրում, որտեղ սիրամարգ կա չորրորդ խո-

¹³ Տասը խորանների սույն պատճառը կամ մեկնությունը ձեռագրի գերակշիռ մասում վերագրվում է Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսին: Տե՛ս Մատենացի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 4509, 2743 և այլն:

¹⁴ Պրոֆեսոր Սիրարիի Տեր-Ներսեսյանի ինձ տրամադրված մանրամասնության իմացա, որ British Museum-ի Oriental № 2707 ձեռագրում, 1542 թ. արտագրված մի ավետարան հետևյալ երկու: առաջարանն ունի. ա) «Ներսէսի հայոց կաթողիկոսի կղայեցւոյ: Արարեալ պատճառս Ժ խորանաց սրբոյ անտարանիս» (թղթ. 1ա), բ) Յայլմէ վարդապետէ ասացեալ բան վասն խորանաց անտարանիս» (թղթ. 2ա): Առաջին բնագիրը կարելի է համեմատել «Թորոս աղրարում զետեղված պատճառի հետ, իսկ երկրորդը՝ Ներսես Շնորհալու «Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի» հետ (Կ. Պոլիս, 1825, էջ 6—8; Հմմտ. Մատենագիտութիւնը Եւֆրազի, հրատ. Ա. Վարդանյան. Վիեննա, 1930, էջ 229—230), Առաջին բնագիրը S. Der Nersessian. Manuscrits arméniens des XIII^e et XIV^e siècles de la Bibliothèque des Pères Mekhitaristes de Venise. Paris, 1937, p. 58—60:

¹⁵ Ռոսլինյան նկարները ապված են անգլերեն հոդվածում. H. Evans. Canon Tables as Indication of Teacher-Pupil Relationships in the Career of T'oros Roslin.—In: T. J. Samuelian, M. E. Stone, eds. Medieval Armentian Culture. Chico, California, 1984, pp. 282—290:

¹⁶ T. A. Izmailova. Les tables de Canons de l'évangile du Maténadaran № 3753.—Revue des études arméniennes, N. S., 16 (1982).

րանում¹⁷, № 6239 ավետարանում՝ նույնպես¹⁸։ Բացի այդ, սիրամարգ տեսանք նաև ավետարանների անվանաթերթերում¹⁹։ Ուստի սիրամարգի խորհրդավոր նշանակությունը հասկանալու համար չենք կարող գոհանալ ո՛չ Ստեփանոս Այունեցու և Ներսես Շնորհալու մեկնություններով, ո՛չ էլ հայ միջնադարյան ուրիշ հեղինակների բացատրություններով նախ և առաջ այն պատճառով, որ առկա իրարամերժ բացատրությունները չեն համապատասխանում նկարիչների սովորություններին և ապա՝ որովհետև սիրամարգների և սկահների նախադասությունները գոյություն ունեն ավետարաններից անկախ և նույնիսկ ավելի հին են, քան քրիստոնեական արվեստը։

Ճարգ պահպանված բոլոր հայկական ավետարանների նկարներից ավելի հին է հրուսաղեմում հայտնաբերված VI դարի Մուսրարայի հայկական խճանկարը, որի կենտրոնում երևում են սափորը շրջապատող երկու սիրամարգ²⁰։ Այդ սափորից դուրս են գալիս ողկուղներով լի խաղողի որթեր։ Մուսրարայի խճանկարը գտնվում էր հայ վկա սուրբ Պողոկտոսի մատուռում, Դամասկոսյան դուռնի մոտ։ Նվիրված է Շիշատակին եւ փրկութեան ամենայն հայոց, զորոցս անուանս Տէր գիտէ»։

Հռոմի գետնադամբանների II դարի գերեզմաններում, հնչպես նաև III դարի քրիստոնեական հուշարձաններում երևում են սկիհի կամ սափորի մոտ կանգնած սիրամարգներ²¹։ Նույն նկարը հանդիպում է հրեական գետնադամբաններում կամ հնագույն ժողովարաններում²²։

Սիրամարգի խորհրդավոր նշանակությունը շատ լավ են բացատրում լատիններեն աղբյուրները։ Պլինիոսի բնագիտությունից իմանում ենք, որ սիրամարգը ամեն տարի փետրաթափ է լինում աշնանը և նոր փետուրներով ծածկվում գարնանը²³։ Այս շատ հասարակ փաստը պատճառ է եղել, որ սիրամարգին դարձնեն հեթանոսների մոտ անմահության, իսկ հրեաների կամ քրիստոնյաների մոտ՝ մեռելոց, հայտնության խորհրդանշան։ V դարի սկզբներին Օգոստինոսն «Աստծու քաղաք» երկի 21-րդ գրքում ասում է, թե սիրամարգի միսն էլ անապական է²⁴։ Իսկ XIII դարում Անտոն Պադուացին ամփո-

¹⁷ T. A. Izmailova. L'iconographie du manuscrit du Maténadaran № 2877.— Revue des études arméniennes, N. S., I (1964).

¹⁸ E. Korkmazian. La miniature arménienne, XIII^e—XIV^e siècles. Collection du Maténadaran. Leningrad, 1984.

¹⁹ ՄՄ, ԱԽ. № 311, 6305.

²⁰ S. Der Nersessian. L'art arménien. Paris, 1977, pp. 69—70, fig. 41—45; B. Narkiss. Armenische Kunst. Die faszinierende Sammlung des armenischen Patriarchats in Jerusalem. Stuttgart und Zürich, 1980, S. 28, 147 Abb. 5, 59, 40; H. Evans. Nonclassical Sources for the Armenian Mosaic Near the Damascus Gate in Jerusalem.—In: N. G. Garsoian, T. F. Matthews, R. W. Thomson, eds. East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period. Washington D. C. 1982, pp. 217—222.

²¹ H. Leclercq. Հոգվածների հնագիտական հանրագիտարանում.—In: F. Cahrol, H. Leclercq, eds. Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie. Paris, 1937, «Paon» հատոր XIII, p. 1075—1097, նկար 9596 (arcossolum Հռոմի Viale Manzoni գետնադամբանում, նկ. 9598 (որմնակար պրեմիերատի գետնադամբանում), նկ. 9606 (սիրամարգներ և որթերով լի սկահ՝ Ռավեննայի Ս. Ապոլինար նոր եկեղեցու transepta-ում)։

²² Նույն տեղում, նկ. 9595 (Vigna Randanini հրեական գետնադամբանի առաստաղ)։ H. Leclercq. Հոգվածների հնագիտական հանրագիտարանում.—In: Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie. Paris, 1925, «Hamman-Lif», հատոր VI², p. 2042, նկ. 5575.

²³ Plinius Secundus. Naturalis historia lib. X, cap. 22 (տե՛ս Leclercq 1937, p. 1075).

²⁴ Augustinus. De civitate Dei, lib. XXI, cap. 4 (ed. B. Dombart, A. Kalb vol. 2 Leipzig 1924) (տե՛ս Leclercq, 1937, p. 1076).

փում է միջնադարյան վարդապետների կարծիքը, թե ճշմարտությունը հարուստ ժամանակ, երբ իր բոլոր ծառերը (այսինքն՝ բոլոր սրբերը) սկսեն դալարանալ, սիրամարգը (այսինքն՝ մեր մարմինը), որ մահկանացության փետուրները թափել էր, անմահության փետուրները կստանա²⁵։

Ուրեմն, եթե հին դամբաններում նկարված սիրամարգները անմահացածների խորհրդանշն են, ապա ի՞նչ անմահացնող խմիչք պետք է խմած լինեն իրենց մոտ գտնվող սկահից կամ սափորից։

Եթե նկատի առնենք Մուսարարայի խճանկարի սափորից դուրս ելնող որթերն ու ողկույզները²⁶, կարող ենք անմիջապես կոահել, որ սափորի մեջ եղած հեղուկը քրիստոնեական հաղորդության գինին է։

Սակայն չենք կարող այդ բացատրությամբ գոհանալ, քանի որ սափորը կամ սկահը որպես խորհրդանշ հանդիպում է ոչ միայն քրիստոնյաների, այլև հրեաների մոտ։ Օրինակ Համման-Լիֆի ժողովարանի հրեական խճանկարում երկու սիրամարգի մեջտեղում դրված ամանից ոչ թե խաղողի որթ է ելնում, այլ ջուր է բխում²⁷։

Հին քրիստոնեական բազիլիկաների առջև հաճախ գտնվում էր շինված մի փոքր կառույց, որը բաղկացած էր չորս կամ վեց սյուներից և նրա վրա հանգչող մի տանիքից²⁸։ Տանիքի տակ գտնվող ցայտաղբյուրի ջրով լվանում էին իրենց ձեռքերը ու ոտքերը՝ բազիլիկա մտնելուց առաջ, իսկ կամարածև տանիքի գագաթին կանգնած էին երկու սիրամարգներ, ինչպես, օրինակ, Հռոմի սուրբ Պետրոսի նախկին բազիլիկայի առջև եղած աղբյուրի վրա, որը նկարվել է 1590 թ., De Winghe-ի կողմից²⁹։ Այս նկարը շատ նման է ավետարանների խորաններին։

Արդ, հուշարձաններն ու խորանները քննելով՝ կարծում եմ, թե սիրամարգների միջև եղած մեծ սկահը կամ սափորը, սովորաբար, շատ նման է հունարեն *κλυστρος* կամ *κρυατήρ* (հայերեն խառնարան կամ թակոյք) կոչված ամաններին³⁰։

Անմահություն պարունակող այդ *κρυατήρ*-ի կամ խառնարանի մասին կա մի կարևոր երկ II դարից, որը վերագրվում է Հերմես Նոամեծին³¹։ Չորրորդ ճառում «Խնդր», ով հայր,— Հերմեսին հարցնում է աշակերտը,— Աստված միտքը չբաշխեց բոլոր մարդկանց մեջ։ Նոամեծը պատասխանում է. «Բանն այն է, որդյակ, որ աստված ուզեց, որ միտքն ընծայվի ոգիներին, որպես մերցանակ։ Աստված միտքը լցրեց մեծ խառնարանի մեջ և ուղարկեց երկիր, հետո առաքելով մի մունետիկ, որը պետք է քարոզեր մարդկանց սրտերում, թե «Մկրտվի՛ր, եթե այդ կարողությունը ունես՝ ահա այս խառնարանի մեջ. հավատացողդ կվերամբառնաս խառնարանն ուղարկողի մոտ, իմացող՝ թե ինչ

²⁵ Antonius Pataunus. Sermo feriae V poet Trinitatem, „In generali resurrectione qua omnes arbores, id est omnes sancti, incipiunt nirescere, pano ille (corpus nostrum) qui mortalitatis pennas abiecit, immortalitatis accipiet“ (տե՛ս Leclercq, 1937. p. 1075). Opera omnia (ed. J. de la Haye). Paris, 1641.

²⁶ Տե՛ս ծան. 20։

²⁷ Տե՛ս ծան. 22։

²⁸ II. Leclercq. Հողվածներ հնադիական հանրազիտաբանում.—Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie. Paris, 1910, „Canthare“, t. II, 1955—1975.

²⁹ Նույն տեղում, նկ. 2023։

³⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա, էջ 927 (քրատիր բառի մասին), *Κλυστρος*։ ը լինում է կամ մեծ քրատիր, կամ ցայտաղբյուրի ավազան, կամ վերը (ծան. 28) նկարազրված կառուցվածքը։

³¹ Հերմես Նոամեծին վերադրված հայերեն «Սահմանք»-ի և ուրիշ հատվածների մասին տե՛ս Ս. Արևշատյան. Հ. Մանանդյան և Հերմեսյ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք.— Թեաների Մատենադարանի, 3, Երևան, 1956, էջ 287—314։

նպատակով ես ծնվելու Սրգ, ովքեր ուշագործվում դարձրին մոնետիկի բարոյությունը և մկրտվեցին մտքի սկրտությամբ, դրանք հասկացողություն ստացան և: գարձան կատարվալ մարգիկ³²: Բայց կատարվալ սարգ դառնալ նշանակում է աշխի փառավոր վարքն ընտրել, որի սիրոցով սարգը անմահանում է³³:

Հերմես Եռամեծին վերագրված այս ճառը հորինվել է Ալեքսանդրիայում, ս. թ. II դարում: Անանուն հեղինակը ներշնչվել է ոչ միայն հեթանոսական փյուխոփալությունից, այլև ղանաղան, գլխավորապես եգիպտական և հրեական: Կատարվեցին: Տվյալ դեպքում, թվում է, թե ճառի հեղինակը այլաբանորեն ըմբռնելով պրոսելիտների հրեական մկրտությունը կամ հեթանոսական նվիրագործման զանազան ծեսեր, հաստատում է, թե իսկական մկրտությունը ջրի լողանք չէ, այլ աստվածալին սիրտը, իսկ անմահությունը ուրիշ ոչինչ չէ, բան հասկացողություն:

Արդ, այդ բնագործ կարող ենք ռացատրել, թե ինչու է խառնարան կամ սահման կաս սկտ: դրվում սիրամարգների մեջտեղում սեր հիշատակած հրեական կամ քրիստոնեական հուշարձաններում, ինչպես նաև հայկական ավետարանների խորաններում: Այդ խառնարանը պարունակում է աստծու ուղարկած անսահման ուժերը, ովքեր խմբիցին՝ սիրամարգների նման անապական դարձան: Անսահման օրինակ լինելով՝ սիրամարգները թե՛ հրավիրում են միտք ընդունելու, և աստծուն ճանաչելու և թե՛ նշանակում են անմահացած հավատացյալներին խոստացված վիճակը՝ երբ Աստծու մոտ պարամբանան:

Այդ է նշանակում Գրիգոր Նարեկացու տաղում, Սողոմոնյան տաճարի խորանում կանգնած սիրամարգի խոսքը³⁴, այդ են ասում նաև ավետարանների խորաններում սկահի մոտ նկարված փառավոր սիրամարգները:

Միջնագարյան քրիստոնյաների կարծիքով ավետարանն ուրիշ ոչինչ չէ, բայց աստվածալին միտք, անմահացնող աստվածալին խոսք: Հետևարտը, ովքեր այդ մտքից կխմեն, սիրամարգների նման կանմահանան:

Ահա թե այլաբանորեն ինչ էին խոստանում առաջին խորանների նկարիչները ավետարանն ընթերցողներին: Սիրամարգի և սկահի նախազարդերը ավելի հին հուշարձաններից են փոխառնված, հատկապես չափազանց աղբյուրներից, որոնք կանգնած էին տաճարների մոտքի³⁵ մոտ: Սրանց նմանությունը սիրամարգները նկարվում են խորանների վրա, որոնք գտնվում են ավետարանների շևտքին, նրանց սկզբում:

Այսուհանգերձ, այդ խորհրդանշանները ավելի հին են և հեթանոսական ծաղում ունեն, ինչպես իմացանք Պլինիոսից և Հերմես Եռամեծից³⁶:

ПАВЛИН И КУБОК В ХОРАНАХ АРМЯНСКИХ ЕВАНГЕЛИЙ

Жак-Пьер МАЭ (Франция)

Резюме

В армянских Евангелиях часто встречаются узоры в виде чаши, по обеим сторонам которой стоят павлины. Чаще всего подобные изображения венчают собою заставки заглавных листов и хорапов. Наличие такого мотива объясняется в пер-

³² Corpus hermeticum, IV, 3—4 (Nock—Festugière, 1946, p. 50).

³³ Նույն տեղում, 7, էջ 51:

³⁴ Տե՛ս ծան. 11:

³⁵ Տե՛ս ծան. 29:

³⁶ Տե՛ս ծան. 23, 32, 33:

вую очередь продолговатой формой этого рисунка, подходящего для его расположения на верхнем поле хоранов, а также его чисто декоративной ценностью. Чудесная птица павлин восторженно упоминается в труде Езника, в древнеармянском переводе Филона, в географии Анании Ширакаци, в Книге хрий и у Григора Аршаруни.

Изображение павлинов по сторонам чаши имеет, кроме того, символическое значение. Павлин считался символом бессмертия. Чаша и кубок символизировали Разум или божественную мудрость. Кубок связывается также с идеей крещения и пророчества, что было известно еще в языческой философии. Эта символика могла легко использоваться в орнаментации евангельских текстов, воспринимавшихся как источник божественной мудрости. Божие слово (*rhb*) здесь представлено как кубок Разума. Это символ самого Евангелия и тех, кто к нему приобщился и получил бессмертие под видом павлинов. Весьма парадоксально, что орнаментация Евангелия отражает символику более раннюю, чем христианство. В VI в. этот мотив впервые появился в Палестине, где нашли прибежище некоторые еврейские философы, изгнанные из Египта после 115 г. Он связывается и с Александрией, так как часто фигурирует в созданных в этом городе Евангелиях. Ввоз этих александрийских текстов в Армению можно приписать Корюну и Гевонду, побывавшим в Византии (примерно в 431 г.).